

Չը նայելով այս տեսութեան համառօտութեանը
եւ անկատարութեանը, վերջապետման խօսքս, յոյս
ունենալով, որ զուգ. կը բաժանէք ինձ հետ իմ
յոյսը և համոզմունքը, թէ Հայոց լեզուն և գրա-
կանութիւնը, նայելով ժամանակակից արհեստի
կէտից, կատարելապէս արժանի է ուսումնասիրե-
լու: Յայն անձն զոր մի աշակերտ օգտաւէտ ու-
սումնասիրութիւնը կարող է աւելի և աւելի գրա-
ւել խելքերը դէպի մի դեռ ևս չը հնտալօրտաթ
հող. դէպի ընդարձակ դաշտը պատմութեան և
ֆիլիօզֆիայի:

Թ. Մ.

լաւարարութիւնը անկողնոյ թէ ազգե-
թեան, թէ լուսաւորութեան, թէ միա-
թեան և թէ ազգագրական անհատական
կողմէ, և իր Գերմանացի Լուիս Կարլ Կարլս-
թալիսի, մեծնայ և պայծառ ապագայ մը
պիտի ստորադրուի:

Լ. Զոտանը եւ իր Գերմանացի անկողնոյ թէ
նորը, ահա ստանք են մի փառաբանում, և
նրա Գերմանացի Լուիս Կարլ Կարլս-
թալիսի, մեծնայ և պայծառ ապագայ մը
պիտի ստորադրուի:

(Արեւելեան Մամուլ)

ՆԱՄԱԿ ԴԱՐԻՆԺԻՑ

Նորին մեծ. Շահը հետաքրքիր Պարսկաստանի
Ֆերհատ-Միրզային իւր տեղ փոխադրեալ թողնելով
Հեռագիրով երկու օր առաջ լուր տուաւ Նորին Մե-
ծութեան Լեզիկին շոգնաւ նստելը կասպից ծո-
փով Աստրախան գնալու:

Քուրդիստանի խռովութիւնը հանգստացնե-
լու համար, Շահ-ը-Դովլան քաղաքից կառա-
վարութեան խորհրդով գնաց Ուրմի, որ քուր-
դերի Շէյխի և նոցա բէկերի հետ հաշտութեան
զայիւր կապէ:

Լուսմենը, որ քուրդի-խանը, այժմեան սար-
մարաւի (քրիստոնէից պաշտպան պետական
պաշտօնային) մի առանձին անհրաժեշտութեամբ
սկսել է վարուել Հայերի և Ասորիների հետ: Պա-
պագաւան խանը, հակառակ իւր պաշտօնի նա-
շակութեանը, որ պիտի պաշտպանէր քրիստո-
նեաներին և հրէաներին մասնատակաւորութեան հա-
շտանքներէն և անհրաժեշտութեանց, ինքը սկսել
է նոցա մէջ խռովութիւններ սերմանել: Տալով
իւր պաշտօնին կրօնական բնաւորութիւն, քուրդի-
խանը արդէն եղել է կաթոլիկ միաբնակների
մոլեռանդ մի արքանակ, և պարսից կառավա-
րութեան բարի նպատակը քրիստոնէից մասին զէպի
չարը գործադրելով, նա սկսել է Հայերի և Նես-
տորական Ասորիների մէջ կաթոլիկութիւն տա-
րածել: Նորա մի այդպիսի վարկածութիւնը, գտա-
նելով խորին ընդդիմադրութիւն Նեստորականաց
եպիսկոպոսի կողմից, մեծ հակառակութեան պատ-
ճառ դարձաւ խանի և նորին սրբազնութեան մէջ,
որոյ առիթով եպիսկոպոսը 140 թուան տու-
ղանքի ենթարկուեցաւ: Բուրդի-խանից, Նեստո-
րականաց եպիսկոպոսը այժմ Դավթէժ եկած է
այդ անհրաժեշտ զէմ բողոքելու:

Մի թիֆլիսեցի հայ
վաճառական Թէրզյան գնալու ժամանակ, ճանա-
պարհին աւազակները կողոպտում են նորան և
խլում են մինչև 6000 մանեթ արծաթ, ինքը հա-
զի կեանքը ազատում է անակնկալ մի դիպուա-
ծով:

Մի առաստաղների հայ, որ գալիս էր Կ. Պոլ-
սէն, նոյնպէս աւազակների է պատահում Դիզէ-
խալիի մօտ (իսպանական լեռներ) իւր բոլոր ու-
նեցածը կողոպտում են և մերձ ի մահ վերադա-
րում:

Քաղաքի մէջ մի քանի օրիկաներ մի հարուստ
պարսկի տունն են մտնում գիշերով: Խնջարով
նորան կարատում են իւր անկողնի մէջ, և բռ-
նաբար խլում նորա մանկահասակ կնոջը, հետոնում
են առանց մի բան գողանալու նորա տնէն: Ան-
պատում կնոջ յայտնի է մեր քաղաքում որպէս
գեղեցկուհի, լաւ երգող և լաւ պար եկող տիկին:

Էսպիան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շառիաթի օրէնքով Պարսից շահը պէտք է ոտը
կոխէ այն հողի վրա միայն, որ պատկանում էր
իրեն: Շահի զէպի Երօթայ ճանապարհորդու-
թիւնը, որպէս զի պատուիրազանցութիւն չը լի-
նէր ընդդէմ յիշեալ օրէնքին, ասում են, մեծ Մուշ-
տէիցը վճռեց այդպէս, որ Նորին մեծութիւնը
հասնէ այնպիսի կոչիւններ, որոյ ստորոտի (պա-
ստաւորութեան) տեղը չի ունենում:

Գոյլի կաշու ծալքերումը լցրած էր Պարսկաստանի
հողով: Այնպէս որ նա իւր ամբողջ ճանապար-
հորդութեան մէջ դարձեալ Պարսկաստանի հողի
վրայ կը ման գայ:

«Մանգուէի Էֆֆար» լրագրում կարգում ենք
հետեւեալ տողերը, քաղված Յիւրիխի „Neue Zü-
richer Zeitung“ գերմաներէն լրագրից՝ «ասկէց
հինգ տարի առաջ Պետրոպոլէն քանի մը հայեր,
հայ երիտասարդ մը (պ. Բէկնազարեան) խրկած
էին Քիւսնախտի մանկավարժական դպրոցը վար-
ժապետ պատրաստելու: Յիշեալ երիտասարդը
եռամեայ ընթացքէն ետքը Ալեքսանդրապոլի
հայոց երկսեռ դպրոցին 200-ի չափ աշակերտաց
տեսուչ կուլուեցաւ: Ի վերջոյ նոյն հայերէն միւսը ի
նշան գոհունակութեան և երախտագիտութեան,
սոյն դպրոցի տնօրէն պ. Ֆրիդլին, հայկական ու-
կերչութեան արգասիք մի ծանրագին ոսկի բաժակ
կնծածեց, որոյ վրա գերմաներէն և հայերէն
ընդունողի և ընծայողի անունները գրելով: Քանի
մը օր առաջ մի նոյն նպատակով հինգ երիտասարդը
ևս խրկած են, որոնց հետ միանալով Կ. Պոլսոյ
հայոց պատրիարքին եղբորդին, ըստ փափա-
քանաց նորին սրբազնութեան, վեց եղած է նոյն
դպրոցի հայոց թիւը այժմ: Այս առթիւ կաւելց-
նենք նաև թէ Յիւրիխի և նորա շրջակայիցը մէջ
24 հայ երիտասարդք կան ուսանողս:

«Մասիս» լրագրում կարգում ենք թէ՛ Բ. Դրան
լրագրական դիւանին տնօրէն վանք. Նուզնէթ
էֆենտին գաւառաց մէջ հրատարակեալ թուրքե-
րէն լրագրաց պատուէր գրեց, որպէս զի իրենց
էջերը տեղական իշխանութեանց վերա գովեստ-
ներով չը լցնեն, այլ գովաւարեակ ժողովրդոց
նիւթապէս և բարոյապէս օգտակար ըլլալիք տե-
ղեկութիւններով:

«Русскій Миръ» ռուս լրագրի № 104 հետ ու-
ղարկեցաւ բոլոր ստորագրողներին մեղ արդէն
ժանօթ քրօնիւրը «О существе национальной ин-
дивидуальности», որի մասին մենք անցեալ տարվայ
«Մշակի» (№ 33) մէջ խօսած էինք:

Գերմանեայի քանի մի քաղաքներում, օրինակ
Մանչէյ, Ֆրանկֆուրտ, Վիսբադէն և Կապիլ խո-
վութիւններ պատահեցան, պատճառ որ հացի և
գարեջրի (պիվայի) վրա գններ բարձրացան: Ժո-
ղովրդը կոտորեց հացի խանութները ու գարեջրա-
տների դռները ու պատուհանները, պիւրիան մէջ
մտաւ անկարգութիւններին արգելք դնելու հա-
մար, երկու կողմից էլ կան սպանվածներ և վի-
րաւորվածներ: Պօլիցիան շատերին կաշնաւորեց:

Թէ մեր գրականութիւնը աղքատ է բանա-
ստեղծական աշխատութիւններով, այդ գիտէ մե-
զանից ամէն մէկը, որ փոքր ի շատէ ժանօթ է
հայկական մամուլին: Ինկաւտի ունենալով, թէ
մեր հասարակութեանը որքան օգտաւէտ կարող
են լինել երգերը, որոց միայն առնուած է
ոչ թէ երեսկայական—ցնորամիտ ոգեբորութիւն-
ներից, այլ ժողովրդի իրական կեանքը նկարա-
գրելով, պատկերացնում են նորա անտեսական
աւերում և հիւանդոտ դրութիւնը, նորա բա-
րոյական և մտաւորական պակասութիւնները,—
Մշակի խմբագրութիւնը դիտաւորութիւն ունէ այս
տարի տպագրել պարոն Բաֆֆիի «Փունջ» անու-
նով բանաստեղծական գիրքը: Ամբողջ գիրքը կը
լինի պարոն Միսնաբեանցի «Քնար Հայկականի»
մեծութեամբ. նա բաժանուած է երկու մասն:
Առաջին մասը գրուած է բոլոր ոտանաւորներով
և պարունակում է իւր մէջ փոքրիկ պատկեր-
ներ և նկարա գիրք առնուած ազգային
կենսաբան, այլ և զանազան քնարերգական
և պատմական երգեր: Երկրորդ մասը գրուած
է արձակ շարագրութիւնով և բազմապէս է փոք-
րիկ վէպիկներէ, որք առնուած են ժամա-
նակակից անցքերէ:

«Փունջի» տպագրութեանը մասնակից լինելու
ցանկացող անձինք կարող են բաժանորդ լինել,
կանխիկ վճարելով 3 ռուբլի, որոյ փոխարէն կըս-
տանան մի օրինակ այդ գրքից: Տպագրութիւնը
վերջնապէս յիտոյ վաճառելու համար «Փունջի»
գիրքը կը նշանակուի 4 ռուբլի:

Թիֆլիսում ստորագրուել կարելի է ուղղակի
Մշակի խմբագրատանը, իսկ գաւառներում կամ
այլ քաղաքներում քանի մի գործակալների մօտ,
որոց անունները կը յայտնենք մեր թերթի գալոց
համարով:

Եթէ հայկական գրականութեան սիրողները իւ-
րեանց նիւթական օգնութեամբ կը նպաստեն մեզ
«Փունջի» տպագրութեանը, այնուհետ խմբագրու-
թիւնն նպատակ ունի ի լոյս ածել պ. Բաֆֆիի
և միւս բանաստեղծութիւնները, որոնք են «Եր-
վելիկ» վիպասանութիւնը երեք հատորով պարս-
կաստանի կեանքից առնուած, «Զաւրուստ»
առան երկու հատորով թիֆլիսու կեանքից առ-
նուած, և նորա ամբողջ ճանապարհորդութիւնը
Պարսկաստանում, որ բաղկանում է 50 նամակ-
ներից, որոցմէ զեռ 21-ը տպուած է Մշակի մէջ:

Լուսմենը, որ այս օրերս մի հարուստ թիֆ-
լիսցի հայ վախճանիկ, մի նշանաւոր գումար է
կտակել Ներսիսեան հողերը—ազգային դպրո-
ցին:

Լուսմենը, որ կովկասեան ուսումնարանական
հոգաբարձութեան մէջ շատով նստերը պիտի սկըս-
վին, որտեղ կը քննվի տարրական ուսումնարան-
ների և ժողովրդական տեսուչների հարցը: Յան-
կալի կը լինէր, որ քննութիւնը և վճիռները հա-
տարակվէին և յայտնվէին հասարակական կար-
ծիքին:

ԹԻՖԼԻՑԻ ՓՕՍՏԸ

Ռուսաստան Արտասահման ամեն օր
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. Քուրմիս Դարբանդ և Երևան-
գաւառը:
ԵՐԵՎԱՆԻ. Բազու Գանջա, Շուշի, Շամախից
ԶՈՐԵՎՇԱՐԹԻ. Քուրմիս Երևան, Ախալցխա
Դարբանդ:
ՀԻՆԴՇԱՐԹԻ
ՈՒՐԵԱՐԹ. Քուրմիս, Երևան Ախալցխա:
Զարբալ, Նուխի:
ՇԱՐԱԹ. Բազու, Դարբանդ Գանջա:

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մայիսի 9-ին):
ՈՍԿԻՆ, (պօլուխիկերով) . . . 6 « 8 «
ԲԱՄԲԱԿԸ Երևանու. 4 « 20 «
" Երկրորդ տեսակը. . . 4 « —
" Ամերիկայի սերմից. . . 6 « 90 «
ԲՈՒՐԴԸ Թուշի. 5 « —
" Երկրորդ տեսակը 5 « —
" Թարեհամի 3 « 20 —
ՇԱՔԱՐԸ Ռուի (Բրոցկու). . . . 7 « 35 «
" Դիւս տեսակը. . . 7 « 20 «
" Քաղաքային տրանցիդ. 5 « 10 «
մաքուր վճարած. 8 « 35 «
ՇԱՔԱՐԱՄԱՐԸ Ռուի. — — —
ՂԱՂՎԱ Լիվանի լաւը. 15 « 50 «
ՂԱՂՎԱ Մօկո, շատ լաւ . . . 17 « 50 «
" Մարտինիկայի, ցածրը . 13 « 50 «
ԱԼԻԻՐԸ Երևանի առաջին տե-
սակը. 1 « 40 «
" Երկրորդ տե-
սակը. 1 « 35 «
ԱԼԻԻՐԸ Գանջու հասարակ. . 1 « 60 «
" Շորագեալու. 1 « 65 «
ԳԱՐԻՆ Երևանի. — 80 «
ՊԻՊԵՐԸ 11 « —
ՇԻՐԻԱՅԻ ձէթ. 8 « —
ՄՈՍ 13 « 20 «

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 9-ին)
ՓՈՒՆՆԱԿ. բարձր պօլս. . . վճա. . . 6—77
" Թարիգուս վճա. . . 4—82
ՄԱՐՍԵԼ և փարիզ. 100 ռուբլին ամէ. . 345 ֆր.
ԼՕՆԻՕՆԻ վերա, (Օդէսայի կուրսը) :
7 ռուբլի 34½ կուպկը ամէ. . . 1 լիւր
ՄԱՐՍԵԼԻՍ Բամբակի 50 քիւլօ
(3 փուլ 2 քիւլ) ծախվում է 75 ֆր.
ՄԱՐՍԵԼԻՍ Երևանու Ամերիկ. սեր-
մի բամբակը ծախվում է 95 ֆր.

առաջին տեսակը . . . 72½ ֆր.
երկրորդ տեսակը . . . 62½ ֆր.
ՄԱՐՍԵԼԻՍ Թուշի սպիտակ բուրդը
ծախվում է 95 ֆր.
Երկրորդ տեսակը . . . 90 ֆր.
գառան բուրդը ամէ. . . 123 ֆր.
Թարաք. բուրդը ամէ. . . 82 ֆր.
Ղարաք. բուրդը ամէ. . . 60 ֆր.
Երկրորդ տեսակը. . . 55 ֆր.

ՌԱՇՏ արքեպիսկոպ 6 բաթմանը (2 փուլ 7 քիւլսն-
քայ) 170—180 զուան (10 զուանը 3 ռուբ. 22 կ.
ՄԱՋԱՆԴԱՐԱՆ, արքեպիսկոպ 6 բաթմանը ամէ
80 զուան:

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ խորշ Նուխայ թիւն
(միտաքը) շատ ընտիրը 147 ռուբլի:

ՊԵՏԵՐՈՒՐԻՎԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 27-ին)
ԼՕՆԻՕՆ. —մի առաքի ամէ 32½ պէնս (փոխա-
նակ 40 պէնս):
ՓԱՐԻՋ. —մի առաքի ամէ 343½ սանտիմ (փո-
խանակ 400 սանտիմ):
Առաջին տեսակը 5% փոխառութեան տոմսակ —
Երկրորդ —
5% Բանկի տոմսակ — 1 շրջանի 95½
" " 2 շրջանի 94
" " 3 շրջանի —

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆՈՆԱՌՈՐ ԵՒ ՎԱՅԵԼՈՒՉ ԳՐՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄԱՌԹԻՒՆԸ ՈՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ. (Исторія и
теорія календарей) Հանգլեր զանազան ծառ-
թութիւններով, յաւելուածներով և զրաւե-
ղանների ու անոթովական ստուերագրերով:—
Մ. Մ. Միսնաբեանց:—Ս. Պետր-
բուրգ 1872 թ., 8 ծալ, էջ 274: Սի օրի-
նակի գինը 1 ռ. 70 կ. հինգ օրինակներ 7 ռ.
50 կ., ճանապարհի ծախսով միասին Նիւ-
թի Եր. § I կանոնաւոր և վայելուչ գրութեան
գրութիւնը մինչև XVIII դարու վերջը (և
տեղեկութիւններ հայ տպագրութեան մասին
3—8) էջ 1—14: § II. այս գիտութեան
զարգանալը XVIII դարու վերջէն մինչև 1825
թուականը. էջ 14—19: § III Սորա գասա-
տութիւնը մինչև Վարստերը, 19—22: § IV
Վարստերի և նորա հետեւողների գասատու-
թեան ձեւը, 22—26: § V. Մասնաւոր գրի ու-
սուցանել և մարմնամարդութեան վերաբերեալ
գրագիտութիւնը (էջ 37, 59—62 և 122) 26
—41: § VI. շախմատի եղանակը 41—43:
§ VII. Վասատութեան հիմնական կանոնները
44—52 § VIII. ուսանողների և ուսուցիչների
պարտականւորների կերպը և յարաբերութիւն-
ները (248) 58—83: § IX. շախմատի թեան
պատմութիւնը. սեպագիր (83, 249), բուն եր-
կապագիր, միջին երկաթագիր կամ միջակա-
գիր, նորագիր, շղարի, նրբագիր, դրամագիր,
կոնդակագիր, փառագիր, փակագիր և փորա-
զագիր, 33—106: Մեր աշխատութեան հի-
մունքները և կերպը (249), 107—124: X.
զպրոցական գրաստանները, նոցա նստարան-
ները, ստուերագրերը և գրագիտութիւնը (124
—1—IV, 149—150, 249) 125—144: Ղարա-
րոցական առողջապահութիւնը (195, 250,
251) 144—150: (Յաւելուած Լ. Սո-
փորութիւնների նշանակութիւնը գասատարա-
կութեան գործի մէջ, 150—178: (Յաւել-
ուած Լ. Օ. Զանազան թանաքներ շինելու
տարազներ և համառոտ տեխնիկականը բա-
նարան 178—189: (Յաւելուած Գ. Վն-
տանների ստիպողական հարկաւորութիւնը
190—196: (Յաւելուած Գ. Յաւելուած-
նութեան և վերջարանութեան տեղ և հայե-
րէն բառագրութեան գրագիտութիւնը (208—
216) 196—221: (Յաւելուած Լ. Վն-
տատմական ստուերագրեր (224—1—16—
225) և համառոտ բառարան 222—248: